ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի նոյեմբերի 6-ի N 1167-Ն հրամանով հաստատված N 1 հավելվածի 1-ին կետի 14-րդ ենթակետով նախատեսված չափորոշիչ)

2017 թվականի ընթացքում մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման պլանների, ծրագրերի մշակման կազմակերպման և իրականացման վերաբերյալ

Գնահատման չափորոշիչներ	Կատարված աշխատանքները՝ ըստ ենթաչափորոշիչների
1. Մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման պլանների, ծրագրերի մշակման կազմակերպումը և իրականացումը	1) ա. մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ծրագրերի առկայությունը. ՀՀ Վայոց ձորի մարզպետի կողմից հաստատվել է <<Վայոց Ձորի անտառտնտեսություն>> մասնաճյուղի անտառների հակահրդեհային կանխարգելիչ միջոցառումների ծրագիրը: Մարզի 50 հանրակրթական ուսումնական հաստատություններում մշակվել և հաստատվել են <<Աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանները>>: Մարզի համայնքներին է տրամադրվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 1532 հրամանով հաստատված <<Համայնքի աղետների ռիսկի կառավարման պլան>>-ի օրինակելի ձևը և մշակման ուղեցույցը: 1)բ. մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացումը. <<Վայոց Ձորի անտառտնտեսություն>> մասնաճյուղի

	անտառների հակահրդեհային կանխարգելիչ միջոցառումների ծրագրով նախատեսված աշխատանքները կատարվել են: Համայնքների կողմից նախատեսված աշխատանքներից կատարվել են. *Մալիշկայի գյուղական համայնքում՝ սելավատարի և համայնքային ճանապարհների ջրահեռացման առուների մաքրում, *Եղեգնաձորի քաղաքային համայնքում՝ Սրկողունք գետի հունի մաքրում, *Ելփին գյուղում ՝ սելավատարի մաքրում, *Վերնաշեն գյուղում՝ սելավատարի մաքրում: 1)գ. քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների ստեղծումը և ծառայությունների գործունեության համար անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը. ՀՀ Վայոց ձորի մարզում ստեղծվել և գործում են քաղաքացիական պաշտպանության 9 մարզային ծառայություններ, որոնք ունեն բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: 1)դ. մարզի բնակչության տարահանման պլանների առկայությունը. Մարզի բնակչության տարահանման ճշգրտված պլանը առկա է: 1)ե. մարզի բնակչության պատսպարման պլանների առկայությունը. Մարզի բնակչության պատսպարման ճշգրտված պլանը առկա է:

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԻ ԵՎ ՀԳՄ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16.01.2018թ.